ConverseBank

Ուղեցույց

ՀԾ Ինտերնետ-Բանկ համակարգի միջոցով ավանդի ներդրման

ՀԾ Ինտերնետ- բանկ համակարգի, այսուհետ՝ Համակարգ, միջոցով Առցանց ավանդի ներդրման համար անհրաժեշտ է ծանոթանալ գործընթացին, և անշեղորեն կատարել ստորև նկարագրված քայլերի հաջորդականությունը:

Ավանդ ներդնելու համար անհրաժեշտ է մուտք գործել համակարգի <Հայտեր> էջ, ընտրել <Ավանդի բացման հայտ> տարբերակը :



Այնուհետև, համակարգը հնարավորություն կընձեռնի նշել Ձեր կողմից Ավանդ ներդնելու համար նախընտրելի պայմանները:



Ձեր նախընտրած կարգաբերումներով Համակարգը կառաջարկի Բանկում գործող ավանդների մասին տեղեկատվություն, որից Դուք կընտրեք Ձեզ համար առավել նախընտրելին և կլրացնեք համապատասխան Հայտը:



Հայտը լրացնելուց հետո , անհրաժեշտ է սեղմել <Հիշել և Ստորագրել > կոճակը, որից հետո Հայտն ավտոմատ կուղարկվի Բանկ:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ Ձեր հայտում նշված հաշվին համապատասխան գումարի բացակայության դեպքում Համակարգն այդ մասին կզգուշացնի Ձեզ : Եթե Ձեր կողմից տրվի կարգադրություն շարունակել գործողությունը, Հայտը կուղարկվի Բանկ՝ մշակվելու համար:

Բանկը Ձեր ուղարկված Հայտը կմերժի Գումարի բացակայության դեպքում, իսկ գումարի առկայության դեպքում Հայտը մշակվելուց հետո <Փոստարկղ>-ի Մուտքային նամակներ էջում Բանկի կողմից Ձեզ կուղարկի ավանդային պայմանագրի օրինակելի ձևը, ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին Ծանուցումը (Հավելված 1), ***անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ անհրաժեշտ փաստաթղթերի ձևեր,***



որոնք անհրաժեշտ է ծանոթանալ ստացված փաստաթղթերին, պատճենել /Save As/ Ձեր համակարգչում որևէ տեղ, պայմանագրում անհրաժեշտ է լրացնել միայն լրացման ենթակա դաշտերը, որոնք ակտիվ են, որից հետո , <Փոստարկղ>-ի Ելքային նամակներ հաղորդագրության միջոցով վերբեռնել Համակարգ և ուղարկել Բանկ Համակարգի միջոցով:

Եթե քաղվածքների և ծանուցումների ստացման եղանակ է նշված փաստային հասցե, որը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, ապա Ձեր հաշվից կգանձվի նամակի առաքման ծառայության ծախսերի չափով:

Ավանդի պայմանագիրը Բանկ ուղարկելու պահից կհամարվի, որ Դուք համաձայն եք և ընունում եք Ավանդի պայմանագրի բոլոր պայմանները, և դրա կապակցությամբ Բանկին հետագայում պահանջներ ներկայացնել չեք կարող:

Դուք իրավասու չեք Ձեզ ներկայացված որևէ փաստաթղթում կատարել փոփոխություն, ացառությամբ լրացման ենթակա պայմանների:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Համակարգի միջոցով Բանկին ուղարկված բոլոր հաղորդագրությունները և փաստաթղթերը համարվում են ստորագրված Ձեր կողմից, ուստի, Համակարգի գաղտնաբառը այլ անձի հասանելի դառնալու դեպքում և հետևանքով Ձեր կրած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում, ուստի, հորդորում ենք լինել առավել ուշադիր և հնարավորություն չընձեռնել այլ (ոչ լիազորված) անձանց տիրանալու Ձեր գաղտնաբառերին, իսկ նման վտանգի կամ փաստի առկայության դեպքում անմիջապես կապ հաստատել Բանկի հետ: Վերը թվարկված բոլոր փաստաթղթերը կարող են ստորագրվել նաև Ձեր լիազորված անձի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանող լիազորագրի առկայության դեպքում: Եթե Ձեր անունից

փաստաթղթերը ստորագրվում են լիազորված անձի կողմից, ապա անհրաժեշտ է փաստաթղթերը Համակարգ վերբեռնելիս կցել նաև լիազորագրի սքանավորված տարբերակը:



1.1. Վերը թվարկված փաստաթղթերը Բանկի համապատասխան աշխատակցի կողմից ստանալուց հետո կիրականացվի ավանդի ներգրավում, որից հետո գործարքը կհամարվի ավարտված: Ընդ որում, եթե փաստաթղթերը Բանկ են ուղարկվել Երևանի ժամանակով (GMT+4) ժամը 16.00-ից հետո, ապա Ավանդի այմանագիրն ուժի մեջ է մտնում և Ավանդը կհամարվի ներդրված Ավանդը Ձեր ավանդային հաշվին մուտք լինելու օրը, ինչը հավաստվում է ավանդային հաշվի քաղվածքով, անկախ այն հանգամանքից, թե ավանդի ներդրման հայտով ինչ ամսաթիվ է նշված:

Ձեր ավանդի վերաբերյալ տեղեկատվությունը կարող եք տեսնել մուտք գործելով համակարգի <Տեղեկատվություն> Ավանդներ էջը: <



Ավանդի ներգրավման մերժման դեպքերը

Բանկն իրավասու է մերժել Համակարգի միջոցով ավանդի ներդրումը, եթե.

1. Փաստաթղթերը ստորագրված չեն,
2. Փաստաթղթերում Ձեր կողմից լրացված տվյալները չեն համապատասխանում Բանկում առկա տվյալների հետ կամ արժանահավատ չեն,
3. Ձեր՝ Բանկում ունեցած հաշիվներին անհրաժեշտ չափով գումար առկա չէ,
4. Ձեր կողմից խախտվել են սույն փաստաթղթով սահմանված դրույթները,

5. Ձեր հաշվին առկա է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառված արգելադրում (ԴԱՀԿ ծառայության, հարկային մարմնի կամ քրեական հետապնդում իրականցնող մարմնի որոշումներով կիրառված արգելանք):

Ավանդի նեդրման մերժման դեպքում Համակարգի միջոցով Դուք տեղեկացված կլինեք մերժման առկայության և պատճառների մասին:

Ավանդի ժամկետի երկարաձգումն իրականացվում է Համակարգի միջոցով ազատ հաղորդագրության ուղարկման ձևով, որի հիման վրա Բանկը կիրականացնի ժամկետի երկարաձգում նույն տեսակի ավանդի համար այդ պահին Բանկում գործող պայմաններով: Այլ տեսակի ավանդի փոփոխության Ձեր ցանկության դեպքում անհրաժեշտ է իրականացնել ավանդի ներգրավման բոլոր վերը թվարկված գործողությունները **սկզբից**:

Ավանդի վաղաժամկետ մարման Ձեր ցանկության դեպքում անհրաժեշտ է Բանկին Համակարգի միջոցով ներկայացնել ազատ հաղորդագրություն՝ նշելով ավանդի պայմանագրի համարը: Նման հաղորդագրություն Ձեր կողմից ստանալու դեպքում Բանկը մեկ բանկային օրվա ընթացքում կդադարեցնի ավանդի գործողությունը՝ Ձեզ հարավորություն տալով ավանդի գումարը փոխանցել մեկ այլ հաշվի:

Խնդրում ենք Բանկին անմիջապես տեղեկացնել Ձեր անձնական տվյալների փոփոխության մասին, եթե այդպիսիք կլինեն (օրինակ, անձը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետը լրանալու մասին, անձը հաստատող փաստաթղթի տվյալների փոփոխություն, հասցեի փոփոխություն, ծանուցումների ստացման հասցեի կամ ձևի փոփոխություն և այլն): Նշված փոփոխությունների մասին չտեղեկացնելու դեպքում Համակարգի միջոցով Ձեր հետագա գործարքները կարող են մերժվել:

Բոլոր դեպքերում, եթե Համակարգից օգտվելու ժամանակ կառաջանան հարցեր, Բանկի պատասխանատու աշխատակիցը սիրով դրանց կպատասխանի: Ընդամենն անհրաժեշտ է Համակարգի միջոցով ազատ հաղորդագրության տեսքով Ձեր խնդրանքը կամ դիմումը ներկայացնել Բանկ:

Խորհուրդ ենք տալիս ավանդի հետ կապված ցանկացած գործողություն կատարելուց առաջ կրկին անգամ ծանոթանալ Ուղեցույցին, այսպես, տեխնոլոգիաների զարգացման հետ մեկտեղ և Ձեր գործարքները Համակարգի միջոցով կատարելու նպատակով Բանկն ամեն անգամ փորձելու է կատարելագործել Համակարգի աշխատանքը՝ Ձեզ համար հետզհետե ստեղծելով ավելի բարենպաստ և անվտանգ միջավայր: